

էի հետ ընթացող, կեանքը իր նորու-
 քիւններու մէջ նշմարող, գաղափարնե-
 րու եւ մտածումներու աշխարհը ցոյա-
 ցընող, հետեւաբար ապրող, բարախուն
 եւ ասոցմով իսկ երիտասարդ, յառա-
 ջապահ նկարագիր մը:» «Մշակոյթ»
 որքան նոր արժէքներու հետամուտ,
 նոյնքան ալ պիտի լծուի հին արժէքներու
 վերագնահատման աշխատանքին, ամե-
 նէն «մեծ համբաւ»-ներէն իսկ առանց
 ամենադոյզն չափով ազդելու:» «Վե-
 րագնահատական այս աշխատանքը պի-
 տի չսահմանափակուի լոկ դէմքերու
 շուրջ, այլ պիտի տարածուի գաղափար-
 ներէն մինչեւ շարժումները:» «Մշա-
 կոյթ»-ը ըլլալու է այն օրինակը, որ
 իր շուրջ համախմբէ ու պահէ հանգի-
 սուրբեան եզրեր պարունակող բոլոր
 ուժերը:»:

Ինչպէս տեսնում էք, խոստումները
 բարական մեծ են: Իսկ ի՞նչ է տրւած
 դրա դիմաց: Կարելի է ասել ոչինչ: Ե-
 րբէ մի կողմ բողոքներ Բ. Թովալեանի
 րանաստեղծութիւնները, միւս հիմնա-
 կան նիւթերը առնուազն աշակերտական
 շարադրութիւններ են՝ տեսա մտքի եւ
 տգէտների յատուկ մեծամտութեան
 արդիւնք: Մի քանի վկայութիւն այս
 ու այն օտար հեղինակից, մի քանի փը-
 ֆուն խօսքեր, նոր բան ասելու մարմաջ,
 յուսահատ տգիտութիւն մայրենի մշա-
 կոյթի բնագաւառում - ան տիրող ու-
 գին «Մշակոյթ»-ի գրական - ֆննդա-
 տական՝ «վերագնահատական» բաժնում:
 Իսկ գրական - գեղարեստական մասի
 մէջը՝ «Պարոն Կալունի»՝ գոեհիկ ու
 տափակ մի պարսաւագիրն է: Ա՛յս է
 «գաղափարներու եւ մտածումներու աշ-
 խարհը ցոյացնող» գործը: Ա՛յս «գա-
 ղափարներով ու մտածումներով» է հը-
 րապարակ գալիս «երիտասարդ սերուն-
 դը»:

Փարիզը Թեհրան չէ: Փարիզում ապ-
 րող ու սնուող երիտասարդներէից իրա-
 տւնք ունենք պահանջելու աւելի լուրջ

մտաւոր պաշար եւ աւելի ձեռնաս մօ-
 տեցում դէպի հայ գրականութիւնն ու
 մշակոյթը ընդհանրապէս:

ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեւանի «Խորհրդ. Հայաստան» քեր-
 քի 5 մայիս համարում հետեւեալ տե-
 դեկաւրիւններն են տրւած Հայաստանի
 մամուլի ներկայ քուական վիճակի մա-
 սին:—

Առ 1 մայիս 1935 ք. Հայաստանի
 սահմաններում հրատարակուած էին 55
 ամունք բերքեր 222.600 միջին տիրա-
 ժով. որից

12 կենտ. քերք	161.500 տիրաժով
27 շրջանային քերք	44.300 տիրաժով
1 երկարուզու քերք	2.800 տիրաժով
9 բազմատիրաժ	9.500 տիրաժով
6 խորհունտեսային	4.500 տիրաժով

Հետեւեալ քական տեղեկութիւնները
 ցոյց են տալիս մամուլի անման աստի-
 նանը:—

1927 ք-ին Հայաստանում հրատարակ-
 ւում էր 5 կենտրոնական քերք 26,700
 տիրաժով. 1932ին՝ 10 քերք 89,700 տի-
 րաժով. 1935ին՝ 12 քերք 161.500 տի-
 րաժով:

1931-ին Հայաստանում լոյս էր տես-
 նում 10 շրջանային քերք 10,900 միջին
 տիրաժով. 1932ին՝ 13 քերք 29,200
 տիրաժով. 1933ին՝ 18 քերք 33,600 տի-
 րաժով. 1934ին՝ 21 քերք 38,000 տի-
 րաժով. եւ, վերջապէս, 1935 ք. մա-
 յիսին՝ 27 քերք 44.300 միջին տիրա-
 ժով: Այս հաշուով, Հայաստանի բոլոր
 27 շրջանները ունին իրենց քերքերը:

Հետաքրքրական են Հայկումկուսի եւ
 Հայգործկումի կենտրոնական պաշտօնա-
 քերք «Խորհրդ. Հայաստան»-ի քանա-
 կական զարգացման ցուցանիշները: Ըստ
 տարիների այս քերքի տիրաժը հետեւ-
 եալ պատկերն է ցոյց տալիս.

1928 ք-ին	8,000
1929-ին	8,200
1930-ին	14,100

1931-ին	20,300
1932-ին	27,000
1933-ին	25,800
1934-ին	33,400
1935-ին	45,000

Հետաքրքրութիւնից գուրկ չեն եւ Հայաստանի ազգային փոքրամասնութիւններին պատկանող մամուլի մասին տրւած տեղեկութիւնները: 1935 թ. մայիսին Հայաստանում հրատարակուում էին.-

1 հանրապետական օրաթերթ թուրքերէն.

1 հանրապետական օրաթերթ ռուսերէն.

1 ,, ,, հնգօրեայ թերթ ֆրոնթերէն.

3 շրջանային թերթ թուրքերէն.

1 շրջանային թերթ ռուսերէն.

1 շրջանային թ. ֆրոնթերէն-հայերէն.

3 շրջանային թ. թուրքերէն-հայերէն.

Այս տեղեկութիւնները կարդալիս չպէտք է մոռնալ երկու պարագայ. 1) ցոյց տրւած թերթը վերաբերում են *«իրաժիս»*, այսինքն՝ տպագրող, տըպարանից ելնող թերթերի ֆանակին, որ, անշուշտ, աւելի մեծ է, քան թերթերի իրական սպառումը. 2) խորհրդային երկրներում շատ անհատների եւ հիմնարկութիւնների համար որոշ թերթերի բաժանորդագրութիւնը պարտաւորեցուցիչ է. անտարակաշայ, բոլորովին այլ կը լինէր պատկերը, եթէ բաժանորդագրութիւնը լինէր ազատ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ-Ի ՏԱՐԵԳԻՐՓԸ

«Համազգային» ընկ. կեդր. վարչութիւնը մամուլին ուղղել է հետեւեալ յայտարարութիւնը.-

Որոշած ըլլալով յառաջիկայ Սեպտեմբեր

թերին սկսել Համազգային Տարեգիրքի տպագրութեան, ստիպողաբար կը խնդրենք մեր աշխատակիցներէն փութացրել իրենց գրութիւնները, տպագրութեան գործը չզանգաղեցնելու եւ յապուման տեղի չտալու համար:

Չկրցանք մեր ձեռնարկին համակիր եւ բարեկամ բոլոր մտաւորականներուն առանձին հրաւեր ուղղել, մեզի անծանօթ ըլլալով անոնց ունեց հասցէները: Կը խնդրենք ներկայ կոչը նկատել աշխատակցութեան հրաւեր:

Բոլոր այն հեղինակները կամ հրատարակիչները, որոնք կուզեն իրենց գործերը ծանուցած տեսնել մեր տարեգիրքին մէջ. պէտք է օրինակ մը զրկեն անոնցմէ՝ ուղղակի տարեգիրքի խմբագրութեան:

Ջերմագին կը խնդրենք բոլոր այն բարեկամ ու համակիր անձնաւորութիւններէն, որոնք իրենց մօտ ունին նահատակ կամ մեռած գրագէտներու անտիպ նամակներ եւ նկարներ, ինչպէս նաեւ պատմական վաւերագրեր, զրկել մեզ անոնց օրինակը կամ բնագիրը, տըպագրութենէն ետք վերադարձնելու պայմանով:

Տարեգիրքին գինն է 20 Ե. դ., լաւ թուղթի վրա, եւ 25 Ե. դ. լաւագոյն թուղթի վրա: Այժմէն կընդունինք պատւերներ, կանխիկ վճարումով:

Յօդած, գիրք եւ նամակ ուղարկել խմբագրութեան անունով.

ALMANACH HAMAZGAINE

B. P. 868. Le Caire (Egypte)

Իսկ զբանակն առաւումները կատարել թժ. Հ. Օհանջանեանի անուան, նոյն հասցէով:

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ» ԸՆԿ. ԿԵՐՐ. ՎԱՐՉ.

